

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Քրիստինե Մուրադի Թաթոսյանի «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (<< նյութերով)» թեմայով Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Աշխարհի մի շարք երկներում նկատելի են պետության դերի, նրա կառուցվածքային օղակների, դրանց գործառույթների, պետության և հասարակության փոխհարաբերությունների վերախմաստավորման միտումները: Դրա հետևանքով մի շարք երկներում իրականացվում են հանրային կյանքի բարեփոխումներ, որոնք ուղղված են կառավարման բոլոր մակարդակների, իշխանության ու հանրային կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մյուս սուբյեկտների միջև փոխհարաբերությունների ռացիոնալացմանն ու այդ հարաբերությունների արդյունավետության բարձրացմանը:

Այս համատեքստում ապակենտրոնացման գործընթացները մեծ դեր և նշանակություն են ստանում, հատկապես, այն երկներում, որտեղ իրականացվում են վարչատարածքային բարեփոխումների ակտիվ գործընթացներ: Թեև շատ երկրների վիճակագրությունը թույլ չի տալիս գնահատել ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա, այնուամենայնիվ, վերջին տարիներին իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ապակենտրոնացման բարձր մակարդակը դրականորեն է ազդում տեղական տնտեսական զարգացման վրա:

<<-ում վարչատարածքային բարեփոխումների գործընթացը մեկնարկել է 2011 թվականից, երբ ընդունվեց «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման» հայեցակարգը, ինչը հիմնավորում էր <<-ում վարչատարածքային բարեփոխումների իրականացման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Վարչատարածքային նշված բարեփոխումներով պայմանավորված՝ առաջ եկան վարչական և ֆինանսական ապակենտրոնացման գործընթացների արդյունավետ կազմակերպման մի շարք հիմնահարցեր:

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է նշված, ինչպես նաև դրանց հետ առնչվող մի շարք այլ հիմնախնդիրների ուսումնասիրությանը, որով էլ պայմանավորված է ընտրված թեմայի հրատապությունը և արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ գնահատել ՀՀ համայնքներում վարչական և ֆինանսական ապակենտրոնացման առկա մակարդակը, վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա՝ առաջարկելով ՀՀ համայնքներում լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների արդյունավետության բարձրացման ուղիներ:

Հիշյալ նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- Վերլուծել ՀՀ վարչատարածքային բարեփոխումների համեմատաբար վաղ փուլերում խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները՝ խոշորացումից առաջ և հետո ժամանակահատվածի տվյալների կտրվածքով:
- Հետազոտել ապակենտրոնացման մակարդակի հաշվարկի և լիազորությունների ապակենտրոնացման համակարգի միջազգային փորձը, ինչպես նաև լիազորությունների ապակենտրոնացման շրջանակներում ֆինանսական ռեսուրսների ապահովմանն ուղղված մեխանիզմները:
- Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների ծախսերի արդյունավետության մակարդակը՝ մեկ շնչին բաժին ընկնող որոշ ծախսատեսակների համադրման միջոցով:
- Համեմատաբար սկզբնական փուլերում խոշորացված ՀՀ համայնքներում հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների հիման վրա մշակել խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն:
- Բացահայտել համայնքների ղեկավարների լիազորությունների՝ ոչ ամբողջ ծավալով իրականացման հիմնական խոչընդոտները և մշակել դրանց արդյունավետության գնահատման գործիքակազմ:
- Իրականացնել գործոնային վերլուծություն ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա:
- Մշակել ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ:

- Գնահատել ՀՀ խոշորացված համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակը բնութագրող ցուցանիշների փոփոխության ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վիճակը բնութագրող ցուցանիշների վրա:
- Բացահայտել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման համակարգի գործող վիճակը, ներկայացնել ոլորտի բարելավմանն ուղղված առաջարկություններ:
- Ընդգծել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում ապակենտրոնացման արդյունավետ և գործող համակարգի ներդրման անհրաժեշտությունը, հիմնական մարտահրավերներն ու խոչընդոտները, և առաջարկել դրանց արդյունավետության բարձրացման այնպիսի ուղիներ, որոնք կարող են միաժամանակ նպաստել նաև տեղական տնտեսական զարգացմանը:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 163 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, կիրառման ոլորտները, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են հետազոտության առարկան և օբյեկտը, ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքներն ու գիտական նորույթը, դրանց գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության գործոն»** գլխում ուսումնասիրվել է լիազորությունների ապակենտրոնացման գործընթացների փորձը կայացած տեղական ինքնակառավարման համակարգ ունեցող աշխարհի մի շարք երկրներում, ինչպես նաև ապակենտրոնացման մակարդակի և վերջինիս՝ տեղական տնտեսական զարգացման վրա ազդեցության գնահատման միջազգային պրակտիկայում առկա գործիքակազմերը և դրանց՝ ՀՀ խոշորացված համայնքներում կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ վարչապարածքային բարեփոխումների ազդեցությունն ապակենտրոնացման գործընթացների կազմակերպման և իրականացման**

վրա» գլխում վերլուծվել են ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների ապակենտրոնացման մակարդակները, փորձ է արվել գնահատել խոշորացման ազդեցությունը համայնքների ծախսերի կառավարման արդյունավետության վրա: Իրականացվել է նաև համայնքի ղեկավարների լիազորությունների և դրանց՝ ֆինանսական համաչափության գնահատում, ինչի արդյունքում վերհանված խնդիրների լուծման նպատակադրմամբ մշակվել է լիազորությունների արդյունավետության գնահատման գործիքակազմ:

Ատենախոսության երրորդ՝ **«Ապակենտրոնացման գործընթացի կազմակերպման և իրականացման քանակական գնահատման հիմքերը»** գլխում ՀՀ խոշորացված համայնքների սոցիալ-տնտեսական ցուցանիշների հիման վրա իրականացվել է գործոնային վերլուծություն, մշակվել է հարկաբյուջետային ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ՝ փորձելով գնահատել վերջինիս ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման ցուցանիշների վրա, ինչպես նաև մշակվել է եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման չափման մեթոդաբանություն:

Ուսումնասիրության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, ՀՀ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին», «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքները, «Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման», «ՀՀ-ում լիազորությունների ապակենտրոնացման» հայեցակարգերը, ինչպես նաև միջազգային մի շարք կազմակերպությունների կողմից մշակված մեթոդական ձեռնարկները:

Հետազոտության շրջանակներում տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ մարզպետների աշխատակազմերի, ՀՀ համայնքների պաշտոնական կայքերը, ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները, ինչպես նաև միջազգային մի շարք կառույցների պաշտոնական կայքերը:

Ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն տեսական, մեթոդական և կիրառական նշանակություն, որոնց գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ հիմնական դրույթներում.

1. ՀՀ խոշորացված համայնքների տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների հիման վրա մշակվել է գործոնային վերլուծության իրականացման մոդել, որի միջոցով հնարավոր է բացահայտել համայնքների տեղական տնտեսական զարգացման հնարավորությունները: Մոդելը կարող է կիրառվել ՀՀ համայնքներում երկարաժամկետ տեղական տնտեսական զարգացման ուղղությունների արդյունավետ պլանավորման համար:
2. Մշակվել է համայնքների ղեկավարների լիազորությունների իրականացման արդյունավետության գնահատման գործիքակազմ, ՀՀ խոշորացված 64 համայնքների ղեկավարների շրջանում իրականացված հարցումների հիման վրա՝ գործոնների հարաբերական կարևորության կշիռների ստացման մեթոդով: Գործիքակազմը թույլ է տալիս ՀՀ համայնքներում բացահայտել լիազորությունների արդյունավետ իրականացմանը խոչընդոտող հիմնական գործոնները:
3. Մշակվել է ՀՀ խոշորացված համայնքների եկամուտների և ծախսերի ապակենտրոնացման ցուցանիշների համակարգ, ինչի հիման վրա առաջարկվել է ՀՀ համայնքների հարկաբյուջետային ապակենտրոնացման մակարդակի վրա խոշորացման ազդեցության գնահատման մեթոդաբանություն՝ համայնքներում եկամուտների և ծախսերի՝ ՀՆԱ ցուցանիշով կշռված ապակենտրոնացման ինդեքսների կիրառմամբ:

Դիպողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության նորույթները ենթակա են խմբագրման, քանի որ վերջիններս շարադրված են երկու մասով, տեսական և ոչ սահուն անցումով կիրառական մասերից, դրանք մեկ սահուն մտքի բերելու և խմբագրելու պարագայում ատենախոսությունը միայն կշահեր:
2. Ատենախոսն անդրադարձել է տեղական ինքնակառավարման ապակենտրոնացման տեսակներին, այնուհետև դուրս է բերել դրանց հետ կապված որոշակի հիմնախնդիրները և տվել է վերջնական որոշակի լուծումներ կամ եզրահանգումներ, սակայն հարցը նրանում է, որ այս ամենն անհրաժեշտ էր համակարգել, ներկայացնել մեկ սյունյակով կամ գծապատկերով՝ ապակենտրոնացման բոլոր տեսակները դրանցից բխող խնդիրները և դրանց լուծումների տրամաբանությունը մեկ ամբողջական կառուցակարգի տեսքով: Վերջինս կարող էր նաև սխեմատիկ և համակարգված հանդիսանալ ամբողջական ու առաջարկվող կառուցակարգ-նորույթ:
3. Ատենախոսի կողմից կատարվել է համայնքային աշխատողների միջին աշխատավարձի հաշվարկ, որի ժամանակ համայնքի աշխատավարձի ֆոնդը բաժանվել է համայնքի բնակչության թվի վրա: Կարծում ենք, որ նման միջինացման և շատ չնչին ֆինանսական տարբերություններով փոփոխությունների միջոցով ծառայությունների որակների տարբերությունների գնահատումը ճիշտ չէ: Բացի այդ նաև նման միջինացումը մեխանիկական է, այլ ոչ թե գիտական:
4. Ատենախոսության 2.3. ենթագլխում հեղինակը մշակել է ՏԻՄ լիազորությունների արդյունավետության գնահատման գործիքակազմ: Մշակված բանաձևի (էջ 105) կիրառական և գիտական արժեքը կմեծանար, եթե հեղինակն այս բանաձևի միջոցով իրականացներ կոնկրետ համայնքի կոնկրետ լիազորության գնահատում և ցույց տար դրա արդյունավետությունն ընտրված մի քանի տարիների ընթացքում:
5. Աշխատանքում առկա են որոշակի խմբագրական և տեխնիկական բնույթի թերություններ, այն է՝ օգտագործված են ուսերեն տերմիններ, որոնց հայերեն համարժեքները կան, հղումների տառաչափը փոքր է 10-ից և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքն ու հետազոտության ընթացքում ստացված արդյունքների նշանակությունը և բացասական ազդեցություն չեն թողնում հետազոտության ընդհանուր գնահատականի վրա:

Ք. Թաթոսյանի թեկնածուական ատենախոսությունն ինքնուրույն, ավարտուն, ամփոփ և գիտական պատշաճ մակարդակով կատարված հետազոտություն է: Ատենախոսը դրսևորել է մասնագիտական գիտելիքներ և վերլուծական ընդունակություններ, ինչի մասին վկայում է ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են 10 գիտական հոդվածներում, իսկ սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի կողմից մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են կիրառվել ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում փոխհարաբերությունների ռացիոնալացման ու արդյունավետության բարձրացման համար:

Այսպիսով՝ Քրիստինե Մուրադի Թաթոսյանի «Ապակենտրոնացման ազդեցությունը տեղական տնտեսական զարգացման վրա (ՀՀ նյութերով)» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
ՀՀ ՊԿԱ կառավարման ամբիոնի վարիչ,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝



Վ.Վ. Խաչատրյան

Վ.Վ. Խաչատրյանի ստորագրությունը հաստատում եմ.

ՀՀ ՊԿԱ գիտական քարտուղար, հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝



Ա.Ա. Պողոսյան

26.05.2025թ.

